ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան

19 դեկտեմբերի 2016թ.

"ՀՀ Կենտրոնական ընտրական Հանձնաժողովը" (այսուհետ՝ **Գնորդ**), ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Գրիգորյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Մակել Թեքնոլոջի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ **Վաճառող**), ի դեմս տնօրեն Զավեն Ավետիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին.

1. *Պայմանագրի առարկան*

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին վաճառել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում (այսուհետ՝ **Հավելված**) նշված ապրանքները և ծրագրային ապահովում (այսուհետ՝ **Ապրանք**), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Պայմանագրի պայմաններին համապատասխանող որակյալ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Ապրանքների հանձնումը հաստատվում է Կողմերի միջև կնքված ընդունման-հանձնման ակտով, որի երկկողմանի ստորագրման պահից Ապրանքի նկատմամբ ծագում է Գնորդի սեփականության իրավունքը:

2. *Կողմերի իրավունքներն ու պարտականությունները*

2.1. Վաճառողն իրավունք ունի՝

2.1.1. պահանջել Գնորդից Պայմանագրի պայմաններին համապատասխանող որակյալ Ապրանքի համար վճարելու Պայմանագրի 3-րդ գլխով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

2.2. Վաճառողը պարտավոր է՝

2.2.1. Վաճառողը պարտավոր է 3-60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում հանձնման-ընդունման ակտով ք.Երևան, Գ. Քոչարի 21ա հասցեում Գնորդին հանձնել Հավելված 1-ում նշված քանակին և տեսականուն համապատասխանող Ապրանքը՝ պատշաճ փաթեթավորված վիճակում, առանց թերությունների, երրորդ անձանց իրավունքներից ազատ և որևէ այլ կերպ չծանրաբեռնված վիճակում:

2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. եթե Վաճառողը հանձնել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, պահանջել 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել չհանձնված Ապրանքի համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

2.3.2. եթե հանձնված է անպատշաճ որակի Ապրանք, իր ընտրությամբ պահանջել՝

2.3.2.1. համաչափ պակասեցնելու Ապրանքի գինը,

2.3.2.2. ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, անհատույց վերացնելու Ապրանքի թերությունները,

2.3.2.3. հատուցելու Ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.3.3. չվերացվող կամ ողջամիտ ժամկետում չվերացվող թերություններ հայտնաբերելու դեպքում, իր ընտրությամբ՝

2.3.3.1. հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը

2.3.3.2. պահանջել 10 (տասը) օրվա ընթացքում փոխարինելու անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին և Հավելվածին համապատասխանող որակի ապրանքով:

2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. Ապրանքի համար վճարել Պայմանագրի 3-րդ գլխով սահմանված չափով, ժամկետներում և կարգով,

2.4.2. Ապրանքը Վաճառողից ընդունելու ժամանակ ստուգել Ապրանքի տեսականու, քանակի և որակի համապատասխանությունը Հավելվածին:

3. Հաշվարկները

3.1. Ապրանքի գինը կազմում է 8000000 (ութ միլիոն) ՀՀ դրամ, ինչպես նաև Ապրանքը մինչև Պայմանագրի 2.2.1 ենթակետով նախատեսված հասցեն առաքելը կատարված բոլոր ծախսերը (այսուհետ՝ Գին):

3.2. Պայմանագրի 3.1 կետում նշված Գնից 100% -ը, Գնորդը վճարում Վաճառողին Պայմանագրի երկկողմանի ստորագրման օրվանից 5-10 /հինգից-տասը/ բանկային օրվա ընթացքում:

3.3. Պայմանագրի 3.1 կետում սահմանված Գինը սույն Պայմանագրի կատարման ընթացքում վերջնական է և փոփոխման ենթակա չէ:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պայմանագրով սահմանված ժամկետային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վաճառողը Գնորդին վճարում է տույժ Պայմանագրի 3.1 կետում նշված գնի 1 /մեկ/ տոկոսի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ կետանցի 15-րդ օրը միանվագ տուգանք Պայմանագրի գնի 10 /տասը/ տոկոսի չափով՝ չդադարեցնելով օրական տույժերի հաշվարկը:

4.2 Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Ապրանքի դիմաց Վաճառողին չվճարելու դեպքում Գնորդը Վաճառողին վճարում է տույժ Պայմանագրի 3.1 կետում նշված գնի 1 /մեկ/ տոկոսի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ կետանցի 15-րդ օրը միանվագ տուգանք Պայմանագրի գնի 10 /տասը/ տոկոսի չափով՝ չդադարեցնելով օրական տույժերի հաշվարկը:

4.3 Կողմերը Պայմանագրով չնախատեսված այլ դեպքերում, իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4 Տուժանքների վճարումը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելուց:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

6.1 Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և/կամ կանխարգելել:

6.2 Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու դեպքում, Կողմը, որի պարտավորությունների պատշաճ կատարմանը խոչընդոտում է անհաղթահարելի ուժը, պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին, որն իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 3 (երեք) օր առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին, եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի:

6. Այլ պայմաններ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և պատշաճ կատարումը:

6.2. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

6.3. Պայմանագրի բոլոր փոփոխություններ և/կամ լրացումները կատարվում են երկկողմանի ստորագրված գրավոր փաստաթուղթ կազմելու ձևով:

6.4. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ՝	ՎԱՃԱՌՈՂ՝
ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ	«Մակել Թեքնոլոջի» ՍՊԸ
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
Լևոն Գրիգորյան	Զավեն Ավետիսյան
ք. Երևան, Գ. Քոչարի 21ա	Հասցե՝ ՀՀ, Երևան, Արին-Բերդի 5/3
հեռ.՝ 54-35-23	
ՀՎՀՀ՝ 01548306	ՀՎՀՀ՝ 00438883
ՀՀ ՖՆ աշխ. Կենտրոնական գանձապետարան Գործառնական վարչություն	Բանկ՝ Հայէկոնոմ Բանկ ԲԲԸ
հ/հ 900011177103	հ/հ՝ 1636003171310100
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
"ՀՀ Կենտրոնական ընտրական Հանձնաժողովը"
և «Մակել Թեքնոլոջի» ՍՊԸ-ի
միջև 19 դեկտեմբերի 2016թ.-ին կնքված
"Առուվաճառքի" պայմանագրի

1. Վաճառվող ապրանքի բնութագիր

	Նկարագրություն	Քանակ	Միավորի գին ՀՀ դրամ	Ընդհանուր
1	Եռատեղ երկարացման լար (7մ)	4000	2000	8000000
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			8000000

2. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրություններ

ԳՆՈՐԴ՝
ՀՀ Կենտրոնական ընտրական
հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ

Աշխատակազմի ղեկավար

Լևոն Գրիգորյան

Ք. Երևան, Գ. Քոչարի 21ա
հեռ.՝ 54-35-23
ՀՎՀՀ՝ 01548306
ՀՀ ՖՆ աշխ. Կենտրոնական
գանձապետարան
Գործառնական վարչություն
հ/հ 90001117/103

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ՝
«Մակել Թեքնոլոջի» ՍՊԸ

Տնօրեն

Զավեն Ավետիսյան

Հասցե՝ ՀՀ, Երևան, Արին-Բերդի 5/3

ՀՎՀՀ՝ 00438883

Բանկ՝ Հայէկոնոմ Բանկ ԲԲԸ
հ/հ՝ 1636003171310100

Կ.Տ.